Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (ՍՏԵՓԱՆՅԱՆ)
Հասմիկ ԱՓԻՆՅԱՆ

ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐԸ ՀԻՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿՈՒՄ

Համաշխարհային երաժշտության պատմության հնագույն շերտերի մեջ են ձևավորվել ռազմական իրադարձություններին առնչվող երաժշտական ավանդույթները: Ցերբազատվելով ծիսահավատալիքային գործառույթից (օրինակ՝ որսի ծիսապարեր) ռազմի երգն ու նվագն ամենատարբեր դրսևորումներով են ներկայացել թե՛ ռազմական պարերում և թե՛ բուն պատերազմական գործողություններում:

Իբրև կարևոր բաղադրիչ տարբ՝ հայոց միապետների բանակներում ևս հնչել են նվագարանային կոչ-մեղեդիներ, որոնց գործառույթը պայմանավորվել է մարտական գործողության կոնկրետ իրադրությամբ: Այս ուղղությամբ ենք անդրադարձել ներկա հրապարակման մեջ՝ քննության առնելով V-XVդդ. հայ պատմագրության տվյալները՝ իբրև հավաստի և արժեքավոր աղբյուրներ: Թեև հիշատակված նյութը վերաբերում է հիմնականում միջնադարին, այդուհանդերձ ակնհայտ է, որ ավանդույթը՝ որպես հելլենիստական մշակութային արժեքների համակարգի արգասիք, ժառանգված է և, թվում է, անդրադարձնում է համընդհանրական երևույթներ, ինչպես օրինակ՝ ռազմի դաշտում հնչող նվագարանային ազդանշան-մեղեդիների միևնույն համակարգի գործառույթը տարբեր ժողովուրդների բանակներում: Միևնույն ժամանակ պատմագրական աղբյուրներից անհնար է դուրս բերել բուն հնչող նյութի երաժշտաարտահայտչական բնորոշիչները: Հետևաբար, հնարավոր է ենթադրել, որ համընդհանուր կոչ-մեղեդիներից զատ, հիշյալ ժամանակաշրջանում կարող էին հնչել նաև տվյալ ժողովրդի երաժշտամտածողությանը բնորոշ մեղեդիական դարձվածքներ:

Պատմագրական տվյալները հավաստի աղբյուրներ են հիշյալ ուղղությամբ կիրառված *նվագարանների տեսակներ* և առանձին դեպքերում՝ դրանց *կառուցվածքի և հնչերանգի առանձնահատկությունների* ուսումնասիրման համար:

Այդ վկայությունները բազմազան են: Կարելի է վստահաբար նշել՝ որ ռազմական տարբեր իրավիճակների ժամանակ հին հայոց բանակում հնչել է համապատասխան *փողավոր* նվագարաններով կատարվող երաժշտություն: Այսպես, Կվառս գյուղաքաղաքի քուրմ Արծանի դեմ Գրիգոր Լուսավորչի մղած զինված պայքարի նկարագրության դրվագներում Հովհան Մամիկոնյանը գրում է ճակատամարտի սկիզբն ազդարարող *պատերազմական փողերի* մասին. «Իսկ սրբոյն Գրիգորի առեալ զիշխանն Արծրունեաց, և իշխանն Անձևացեաց, և զիշխանն Անգեղ տան, և սակաւ ինչ զօրու իբրև արս երեքհարիւր, եկեալ յերրորդ ժամու ընդ բլուրն՝ ուր Արծանն էր: ...Եւ իբրև մերձ եղեն ընդ ելս զառ ի վերին, յառաջ մատուցեալ Արծանն ու Դեմետր, և հնչեցուցին *զփողսն պատերազմին*, և յանդգնաբար յարձակեաց ի վերայ»:[1] Ապա՝ «Արդ իբրև հարստացան երկոքին կողմանքն, և էին 6940 և վեց արք քրմացն, իսկ 5000 և 80 զօրք իշխանացն Հայոց, ապա հնչեցուցին *զփողսն պատերազմացն*»:[2] IVդ. հայոց Տրդատ թագավորի և հունաց բանակների ճակատամարտի նկարագրության մեջ նշված է. «Զի զատին կողմ գեղջն պաշարեցին հետևակքն,և զներքինն հեծելքն: Եւ սկսան հնչեցուցանել *զփողսն պատերազմաց*, և թնդիւն սաստիկ շուրջանակի»:[3] VII դարում հայ-պարսկական ռազմական ընդհարումներից մեկի նկարագրության մեջ պատմիչը գրում է. «Եւ իբրեւ գնացին յեզր գետոյն Մեղտեայ, յայս կոյս իջոյց զնոսա ի քուն առեալ և ինքն պատրաստի արարեալ զդարանակալսն՝ հրամայեաց ծառայիցն կտրել զերիւարսն արաւաի պատճառանաւք և զնոսա յանհոգս արարեալ՝ յանկարծակի հնչեցուցին *զփողսն* յետոյ և յառաջոյ, և ի մէջ առին զնոսա»:[4] Գագիկ Բագրատունու որդիների՝ Աշոտի և Հովհաննեսի երկպառակտության առիթով նշվում

---

[1] *Յ ո վ հ ա ն ն Մ ա մ ի կ ո ն ե ա ն, Պատմութիւն Տարօնոյ (այսուհետև՝ Յովհան Մամիկոնեան), Եր., 1941, էջ 45:*
[2] *Նույն տեղում, էջ 51:*
[3] *Նույն տեղում, էջ 64, 180, 186:*
[4] *Նույն տեղում, էջ 222:*

է. «Եւ իբրև լուաւ Յովհաննէս զգալն Աշոտոյ եղբօր իւրոյ, հրամայեաց *փող պատերազմի* հարկանել»:[5] Պարսիկների դեմ Վահան Մամիկոնյանի կազմակերպած ապստամբության նկարագրության մեջ կարդում ենք. «... և յարձակին ի միմեանս ի *ձայն փողոց* տագնապաւ ի դաշտին Գերանայ»:[6]

Որոշ վկայություններում հիշատակվում է ճակատամարտի *ավարտն* ազդարարող փողերի մասին: Հովհան Մամիկոնյանի աշխատության վերը նշված դրվագներից մեկում նշվում է. «Արդ իբրև մեռաւ Դեմետր ի նոյն պատերազմին, հնչեցոյց իշխանն Սիւնեաց *զփող պատերազմին ի խաղաղութիւն*» :[7]

Հովհան Մամիկոնյանը և Թովմա Արծրունին պատերազմական փողի մասնակցությունը հիշատակել են նաև *ճակատամարտի ընթացքում*: Այսպես, VII դարում տեղի ունեցած հայ-պարսկական ռազմական ընդհարումներից մեկի նկարագրության մեջ Հովհան Մամիկոնյանը գրում է. «Եւ խմբեցաւ պատերազմն այնչափ, որ ոչ գոյր հնար ճանաչել զմիմեանս, բայց միայն *ի ձայն փողոցն* և ի տեսս դրօշացն»:[8] 851թ. հայ-արաբական մարտերից մեկի նկարագրության մեջ Թովմա Արծրունին հիշատակում է. «Մինչ նոքա... ընդդէմ միմեանց ճակատեալ կազմէին զռազմն, և *փողքն* գոչէին և դրօշքն տարածէին»:[9]

Դատելով առանձին վկայություններից՝ ռազմական փողերի քանակը հայոց բանակում բավական մեծ է եղել: Ըստ Եղիշեի՝ հայկական յուրաքանչյուր զորագունդը մի քանի *փողհար* է ունեցել: Ավարայրի ճակատամարտի նախօրեին պարսից զորավար Միհրներսեհը Վասակին հարցրել է. «թէ ... քանի *փողահարք* ի մէջ գնդին ձայնիցեն»:[10]

Ներկայացված նյութից ակներև է դառնում պատերազմական փողի գործառույթի բազմազանությունը, ինչից ենթադրելի է նաև համարժեք հնչող նյութի առկայությունը: Այստեղից էլ օրինաչափորեն ծագում է այն հարցը, թե ռազմական այս կամ այն իրադարձության ժամանակ բանակում արդյոք միևնույն *փող* նվագարա՞նն է գործածվել: Հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է անդրադառնալ գրավոր այն հիշատակություններին, որոնցում տեղ են գտել նաև հակառակորդ բանակների նկարագրությունները: Այստեղ կարևորել ենք երկու իրողություն. նախ՝ հիշատակվող նվագարանների բացառապես հայերեն անվանումները (*փող, թմբուկ, քնար, ջնար*), ապա՝ այդ նույն նվագարանների հիշատակումները հայ իրականությանն առնչվող այլ նկարագրություններում: Այստեղից էլ այն մեծ հավանականությունը, որ հիշատակված ռազմի նվագարանները կիրառվել են նաև հայոց բանակում: Նշենք նաև հակառակի մասին: Այսպես, նույն «պատերազմական փողերը» վկայված են նաև հունաց բանակում: Անդրադառնալով հայոց Տրդատ թագավորի երիտասարդ տարիներին, Ագաթանգեղոսը գրում է հունական բանակում նրա քաջագործությունների մասին. «Եւ նորա առեալ զգունդն զօրաց բազմութեան՝ ի ձայն *փողոյ* տագնապաւ յառաջ մատուցանէր մինչև յանդիման թշնամեացն»:[11] Բյուզանդական բանակի՝ IX դարին վերաբերող նկարագրության մեջ Ստեփանոս Տարոնեցին գրում է. «Եւ ինքն թագաւորն ցամաքաւն եկեալ մերձենայ ի բանակն... և հնչեցուցանել հրամայէր *զպատերազմական փողսն*»:[12] Մատթեոս Ուռհայեցին, պատմելով 1055թ. Տուղրիլ

---

[5] *Յովհան Մամիկոնեան, էջ 91:*
[6] *Նույն տեղում, էջ 186, 190:*
[7] *Նույն տեղում, էջ 200:*
[8] *Նույն տեղում, էջ 210:*
[9] *Թովմա Արծրունի, Պատմութիւն Տանն Արծրունեաց (այսուհետև՝ Թովմա Արծրունի), Թիֆլիս, 1917, էջ 118:*
[10] *Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին (այսուհետև՝ Եղիշե), Եր., 1978, էջ 74:*
[11] *Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, էջ 29:*
[12] *Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն Տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 249:*

Սուլթանի արշավանքի մասին, գրում է. «... Իսկ յորժամ բաժանէր առաւօտն, հրամայէր հարկանել *պատերազմական փողսն*»:[13]

Այժմ անդրադառնանք փողերի տեսակներին վերաբերող հիշատակություններին: Եղիշեի երկում հիշատակվում են *մեծ փող* և *մեծ գալարափող* նվագարանները. «Նշանս բաշխէր, դրօշս արձակէր, և ի ձայն *մեծի փողոյն* պատրաստ հրամայէր լինել»:[14] Ապա՝ «Զայն իբրև ետես Սուշկան Նիւսալաւուրտն, ... ի ձայն *մեծ գալարափողոցն* զիւր գունդսն ատիպէր»:[15]

Կայսերալուրք փողեր է հիշատակել Թովմա Արծրունին՝ IV դարում Մերուժան Արծրունու դեմ Սմբատ Բագրատունու տարած հաղթական ճակատամարտի նկարագրության մեջ. «Ընդդէմ զօրաժողով եղեալ Սմբատ սպարապետ Հայոց ... ունելով ընդ իւր զզօրն Յունաց բազմամբոխ վահանաւորաց և դրօշաց սաւառնացեալոց, և *փողք կայսերալուրք* և գունդք վառելոցն վաշտիցն»:[16] Մատթեոս Ուռհայեցու Պատմության ձեռագրերից մի քանիսում պատերազմական փողի փոխարեն հանդիպում է *պատերազմական շեփոր* անվանումը:

Քննվող գրավոր աղբյուրներում տեղ են գտել նաև բացառիկ արժեք ներկայացնող հիշատակություններ, որոնք վերաբերում են ռազմի փողերի նկարագրին, մասնավորապես հնչերանգին և կառուցվածքին: Արտաշես Ա-ի օրոք հայոց բանակում,ըստ Մովսես Խորենացու հնչել են *պղնձե փողեր*. «Եւ Սմբատ հրամայէր *զփողսն պղնձիս* հնչեցուցանել և յառաջեալ զճակատն իւր, իբրև արծիւ յերամս կաքաւուց խոյանայր»:[17] Նույնը՝ նաև Արտաշես Ա-ի հուղարկավորության նկարագրության մեջ. «... և առաջի *պղնձիս հարկանելով փողս*, և զկնիս՝ ձայնարկու կուսանք, սևազգեստ և աշխարող կանայք ...»:[18]

Իրենց հնչերանգով այլ գործառույթ են ունեցել *եղջերափողերը*: Այսպես, Շապուհ Բագրատունին, նկարագրելով VIII դարում արաբական զորաբանակներից մեկը, նշում է. «Հնչեցուցին *զփողն եղջիւրէ* ի բանակն անօրինաց»:[19] 1098թ. Անտիոքի գրավման պատմության մանրամասների մեջ Մատթեոս Ուռհայեցին հատուկ նշել է. «... և ամենայն բանակն Ֆռանկաց մտին ի քաղաքն Անտիոք. և ընդ առաւօտն միաբան հնչեցուցին *զփող եղջերացն* ամենայն զօրքն»:[20]

Պղնձե և եղջյուրե փողերի հնչերանգային տարբերությունները դարձյալ հնարավոր է դիտարկել *փող* նվագարանի գործառույթային բազմազանության շրջանակներում: Նույնը կարելի է նշել նաև այդ նվագարանների կառուցվածքային առանձնահատկությունների մասին: Մովսես Կաղանկատվացին հիշատակում է *բազմաձայն փողեր*: Աղվանքի թագավոր Վաչեին ուղղված նամակում ասվում է. «Եկն հնաս ի վերայ քո միանգամայն բազմութիւն ազգաց հեթանոսաց, ահաւոր գազանօք, խառնադրոշմն նշանօք, *բազմաձայն փողովք, գալարափող գոչմամբ*, անտառախիտ նիզակօք»:[21]

Բազմաձայն բնորոշումը կարող է վերաբերվել և՛ նվագարանների քանակին և՛ հնչողության բազմաձայն կերպավոր քին: Համանման եզրակացությունների ենք հանգում նաև Սեբեոսի հիշատակություններից մեկի քննության մեջ:Այսպես, անդրադառնալով 607թ. Սմբատ Բագրատունու և պարսից Խոսրով արքայի համագործակցությանը, պատմագիրը գրում է. «Յայնժամ տայ նմա արքայ ... զփող չորեքձայնեանս»:[22] Այս դեպքում ևս չորեքձայնյա փողերը կարող են ստուգաբանական տար-

---

[13] *Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն (այսուհետև՝ Մատթէոս Ուռհայեցի), Վաղարշապատ, 1898, էջ 264:*
[14] *Եղիշէ, էջ 90:*
[15] *Նույն տեղում, էջ 92:*
[16] *Թովմա Արծրունի, էջ 211:*
[17] *Մովսես Խորենացի, Հայոց Պատմութիւն, Տփղիս, 1913, էջ 138:*
[18] *Նույն տեղում, էջ 250:*
[19] *Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ, Էջմիածին, 1921, էջ 23:*
[20] *Մատթէոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 264:*
[21] *Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մ.,1860,էջ 17:*
[22] *Պատմութիւն Սեբեոսի,Եր., 1979, էջ 101:*

բեր մեկնությունների ենթարկվել: Կարելի է ենթադրել, որ փողերից յուրաքանչյուրը արձակել է չորս հնչյուն, կամ ունեցել է չորս ձայնանցք: Հնարավոր է դրանք դիտել նաև որպես մեկ հնչյուն արձակող չորս փողերի խումբ և այլն: Տվյալ դեպքում փողերի *չորնքձայնյա* լինելը դրանց որոշակի տեսակն է վկայում: Նույնը կարելի է ասել նաև *պղնձե փողերի, եղջերափողերի, գալարափողերի,* ինչպես նաև *շեփորի* մասին: Հնարավոր է, որ փող անվանումը պատմագիրների երկերում հաճախ ընդհանրացված անվանումի իմաստ է ունեցել և օգտագործվել որպես յուրահատուկ եզր:

Ի մի բերելով նվագարաններին վերաբերող պատմագրական բնութագրումները՝ նշենք, որ դրանցից մի քանիսում հիշատակվում են նաև տարբեր նվագարաններից բաղկացած նվագախմբերի մասին: IX դարում հայ-արաբական ռազմական ընդհարումներից մեկի նախօրեին, ըստ Թովմա Արծրունու, արաբ թագավոր Ջաֆրը «խնդրէ և տեղեկութիւն թէ քանի՛ *փողք* գոչիցին, և կամ քանի՛ *թմբուկ* դափիցին»:[23] Արաբ զորապետ Բուղայի արշավանքներից մեկի նկարագրության մեջ ասվում է. «...նշանս կանգնեալ և *քնարք* հնչէին, և *թմբուկքն դափէին*»:[24] Նույն ճակատամարտի նկարագրության մեջ նշվում է. «Ցայնժամ հրաման ետուն ամենայն զօրացն ելանել ի պատերազմ.և ահա աղաղակ և *փողք և քնարք և զնարք*, և վառեալ զինու և սրոյ և ամենայն պատրաստութեամբ անհուն զօրացն»:[25]

Ընդհանուր առմամբ քննվող ոլորտը դիտարկելով երևույթի ամբողջական համայնապատկերի մեջ՝ նշենք, որ բացի նվագարանային երաժշտությունից, ռազմական իրադարձությունների ժամանակ և առհասարակ հին հայոց բանակում հնչել են նաև այլ ժանրի և տիպի երաժշտական ստեղծագործություններ (հմա՝ ժողովրդական և հոգևոր երգեր, պարեր): Քննության մասնավորեցումը սոսկ նվագարանային երաժշտության ոլորտով, ակնկալում է այլ աղբյուրների՝ հնագիտության, կերպարվեստի (հատկապես՝ մանրանկարչության), ինչպես նաև հարևան ժողովուրդների համապատասխան և համարժեք աղբյուրների տվյալների համադրական ուսումնասիրություն: Պատմագրական նյութը լուրջ հիմք է տալիս հայոց բանակում կիրառված նվագարանային երաժշտությունը արժևորելու իբրև ժամանակի երաժշտարվեստի ինքնատիպ ոլորտ, որտեղ բազմապիսի գործառույթի մեջ են դրվել ինչպես մասնահատուկ, այնպես էլ ավանդական նվագարաններ:

МУЗЫКАЛЬНЫЕ ИНСТРУМЕНТЫ В ВОЙСКЕ ДРЕВНЕЙ АРМЕНИИ

___ *Резюме* ___ ___ *А. Арутюнян, А. Апинян* ___

В письменных исторических источниках средневековой Армении сохранились сведения о музыкальных инструментах, которые использовались в военных походах. Сбор и систематизация этих свидетельств показывают, что еще с древнейших времен в войске армян использовались духовые, струнные и ударные инструменты. В некоторых источниках присутствует также инструментоведческая информация, которая может играть важную роль в этимологических исследованиях.

[23] *Թովմա Արծրունի, էջ 211:*
[24] *Նույնը:*
[25] *Նույն տեղում, էջ 296:*